Հավելված 1
Չարենցավան համայնքի ավագանու
2023 թվականի դեկտեմբերի 20 - ի
N 104-Ն որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համայնքի գործունեության արդյունավետությունը կախված է բյուջետային գործընթացի ճիշտ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների նպատակային օգտագործումից:

- Համայնքի 2024 թվականի բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են՝ Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշգրտելով հողի հարկի և գույքահարկի, ինչպես նաև անշարժ գույքի հարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները:
- Բարձրացնել ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների և բնակիչների հետ աշխատանքի արդյունավետությունը:
- Բարձրացնել բնակչությանը և տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող համայնքային ծառայությունների և այլ լրացուցիչ ծառայությունների մակարդակն ու որակը:
- Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ:
- Խոցելի խմբերին և բազմազավակ ընտանիքներին ցուցաբերել աջակցություն:
- Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային, կոմունալ տնտեսության բարեկարգման, ճանապարհային տնտեսության բնագավառներում, ավելացնել փողոցային լուսավորությունը:
- Խթանել համայնքում գենդերային, հաշմանդամության և խոցելի խմբերի համար ծրագրերի իրականացումը:
- Կիրականացվի օրենքով համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններ՝ պաշտպանության և արտակարգ իրավիճակների պայմաններում գործողություններ իրականացնելու ոլորտում:

Համայնքի 2024 թվականի զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական մակարդակի բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքում հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինչպես նաև համայնքում գենդերային հավասարությանը:

Ես դիմում եմ համայնքի բնակիչներին, ավագանուն, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ և սրտացավ մոտեցում ցուցաբերել համայնքի 2024 թվականի բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային և հասցեական օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ, ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

✓ 2022 թվականի փաստացի ցուցանիշներ՝
Համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն՝ հաստատված համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի N 93-Ն որոշմամբ:

✓ 2023 թվականի հաստատված ցուցանիշներ՝
Համայնքի 2023 թվականի բյուջեն՝ հաստատված համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի N 79-Ն որոշմամբ

✓ 2024 թվականի կանխատեսվող ցուցանիշներ՝
«Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագիծ, «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքներով:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ, ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

(հազար դրամ)

Հ/հ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2022թ. փաստ.	2023թ. հաստատված	2024թ. կանխ.	2023թ. 2022թ. նկատ. %	2024թ. 2023. նկատ. %	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)		
							2022թ.	2023թ.	2024թ.
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1 363 808,29	1 488 277,08	1 800 000,00	109,1	120,9	100	100	100
1.	Գույքահարկ համայնքի վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	5 847,305	17 900,00	14 480,00	306,1	80,9	0,4	1,2	0,8
2.	Հողի հարկ համայնքի վարչական տարածքներում գտնվող հողի համար	6 563,78	24 500,00	24 500,00	373,3	100,0	0,5	1,6	1,4
3.	Անշարժ գույքի հարկ	89916,429	92 362,00	138 450,00	102,7	149,9	6,6	6,2	7,7
4.	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	182354,5	183 940,00	212 314,90	100,9	115,4	13,4	12,4	11,8
5.	Տուրքեր	15327,48	14 820,00	16 110,00	96,7	108,7	1,1	1,0	0,9
6.	Պաշտոնական դրամաշնորհներ	810 273,20	751 452,40	1069584,6	92,7	142,3	59,4	50,5	59,4
7.	Դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներ	253 525,59	403 302,68	324 560,50	159,1	80,5	18,6	27,1	18,0

4. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ա) ըստ գործառական դասակարգման

(հազար դրամ)

Հ/հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2022թ. փաստ.	2023թ. հաստատված	2024թ. կանխ.	2023թ. 2022թ. նկատ. %	2024թ. 2023. նկատ. %	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)		
							2022թ.	2023թ.	2024թ.
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1 510 549,94	1 590 007,94	2 434 976,909	105,3	153,1	100	100	100
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	497847,93	477413,8	503189,0	95,9	105,4	33,0	30,0	20,7
2.	Պաշտպանություն	750,0	840,0	1 100,0	112,0	131,0	0,0	0,1	0,0
3.	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	100,0	100,0	100,0	100,0	100,0	0,0	0,0	0,0
4.	Տնտեսական հարաբերություններ	-72 286,16	10 221,21	-301 509,335	-14,1	-2949,8	-4,8	0,6	-12,4
5.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	191 231,39	185 446,77	196588,0	97,0	106,0	12,7	11,7	8,1
6.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	72 686,0	68 073,36	33 000,00	93,7	48,5	4,8	4,3	1,4
7.	Առողջապահություն	0	0	0,00	0,0	0,0	0,0	0,0	0,0
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն	90 378,0	57 964,50	43 900,00	64,1	75,7	6,0	3,6	1,8
9.	Կրթություն	699 542,78	764 948,30	1710509,87	109,3	223,6	46,3	48,1	70,2
10.	Սոցիալական պաշտպանություն	30 300,0	25 000,00	25 000,00	82,5	100,0	2,0	1,6	1,0
11.	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր			223 099,374	0,0	0,0	0,0	0,0	9,2

Բ) ըստ տնտեսագիտական դասակարգման

(հազար դրամ)

Հ/հ	ԾԱԽՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2022թ. փաստ.	2023թ. Հաստատ- ված	2024թ. կանխ.	2023թ. 2022թ. նկատ. %	2024թ. 2023. նկատ.%	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ (%)		
							2022թ.	2023թ.	2024թ.
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1 384 308,489	1 601 789,016	2 434 976,900	115,7	152,0	100	100	100
Ա	*ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ*	1 341 353,198	1512234,329	1 800 000,00	112,7	119,0	96,9	94,4	73,9
	Աշխատանքի վարձատրություն	263 304,892	276 912,72	305 992,00	105,2	110,5	19,0	17,3	12,6
	Ծառ. և ապրանք. ձեռք բերում	269 442,922	272 887,75	292 678,63	101,3	107,3	19,5	17,0	12,0
	Սուբսիդիաներ	757880,63	843926,6	931088	111,4	110,3	54,7	52,7	38,2
	Դրամաշնորհներ	0,00	3 041,70	15 000,00	0	493,1	0,0	0,2	0,6
	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	44 544,80	85 399,48	41 300,00	191,7	48,4	3,2	5,3	1,7
	Այլ ծախսեր	6 152,68	22 278,08	228 671,40	362,1	1026,4	0,4	1,4	9,4
Բ	*ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ*	262 577,139	256848,96	936 486,20	97,8	364,6	19,0	16,0	38,5
Գ	*ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ*	-219 621,85	-167 294,27	-301509,3	76,2	180,2	-15,9	-10,4	-12,4
	Չարտ. ակտիվների իրացումից մուտքեր	-219 621,85	-167 294,27	-301509,3	76,2	180,2	-15,9	-16	-36,4